ՄԻ ԿՏՈՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԻՑ

Ապրիլ 28. Ո՞վ կը լինի Հայոց Կաթողիկոսը։ Մինչև այդ խնդրի վճռուելը 4 օր է միայն մնացել, բայց ոչ ոք հաստատ կամ մեծ հաւանականութեամբ չի կարող լուծել։ Նրան այժմ Ընդհանուր մտատանջութիւն է տիրում և անվստահութիւնը ճնշում է բոլորին առանց կուսակցութիւնների խտրութեան։

Ընտրութեան պայքարը դեռ չէ սկսած Էջմիածնում. ընտրողները դեռ չեն ժողովուած, մրցող ոյժերը դեռ չեն որոշուած։ Եւ այս բոլորը այն պատճառով, որ այս անգամ ընտրութեանը անմիջապէս մասնակցում է մի նոր տարր, որը ոչ թէ միայն այս դէպքում, այլ մշտապէս, ոչ պակաս կարևոր խնդիրներում, մեզ համար ծածկուած է եղել անվստահութեան քօղով. և մեր իմացածը նրանց մասին լի է եղել միշտ թիւրիմացութիւններով, որոնք ունեցել են միշտ իրանց բնական հետևանքները։

Ի՞նչ սկզբունքներով կը ղեկավարուեն արդեօք մեր վաղուց և սպասելի և անսպասելի հիւրերը. ինչ մարդիկ են դոքա. ինչու դրանց մէջ չկան բուն Տաճկա-Հայաստանի ներկայացուցիչները. Վան, Մուշ, Բիթլիս, Սղերդ և այլն. ով խնդրեց այդ պարոնների ձայները։

Հայաստանի համար Կաթողիկոս են ընտրում. ուր են բուն Հայաստանի ներկայացուցիչները։ Ինչպէս երևում է Անատոլիայի և Եւրոպական Տաճկաստանի գաղթականութիւնները աւելի շատ ներկայացուցիչներ պէտք է ունենան, քան թէ իսկական Տաճկա-Հայաստանը։ Ուրիշ խօսքերով, այդ կողմից բացակայ պէտք է լինի գլխաւոր ընտրողը։

Պատգամաւորները սկսում են ժողովուել. այս երեկոյ մտաւ գործեց նոցա առաջին խումբը, բաղկացած Անատոլիայի գաղթականութիւնների ներկայացուցիչներից թւով 9 հոգի, որոնցից 7 հոգևորական և 2 աշխարհական են։ Զարմացուցիչ լուրը, որ բուն Հայաստանից չը պէտք է թողնուեն, սկսեց հաւանականութիւն ստանալ. առաջին տպաւորութիւնը վաղուց սպասող հիւրերից ծանր էր սպասողների համար. Նկատւում էր վաղուց նախապատրաստուած և գրգռուած ատելութիւն դէպի այժմեան Էջմիածինը. ուրեմն «Արևելքի» հրէշաւոր զրպարտութիւնները ապարդիւն չեն անցել և այժմ սարսափելի թիւրիմացութիւն է գոյացել, որը կարող է

վտանգաւոր ազդեցութիւն ունենալ մեր եկեղեցու ապագայ վիճակի վերայ. մտքերի և համոզմունքների շփոթութիւն է յառաջացել և, ինչպէս երևում է, շատերը գ ա ռ ը գ ա յ լ ի, գ ա յ լ ը գ ա ռ ի տեղ են ընդունում. Սրանցից թիւրիմացութեան առաջին զոհը պէտք է համարել Թէքիրտաղի (Ռոտոսթոյի) Առաջնորդ Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեանին, որը հիւրասէր միաբանութեան մէջ դժգոհութիւն է յայտնում նրա համար, որ Էջմիածինը իրան ընդունում է իւր Ղազարապատ կոչուած միակ հիւրանոցում. Այդ մարդը չեղած ուրիշ շինութիւն էր պահանջում, հիմք դնելով դրան այն, թէ ինքը «Ռոտոսթոյի Առաջնորդ Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեանն է»։ Ինչպէս երևում է Սրբազանը վերին աստիճանի փափկասէր է. սաստիկ սիրում է հանգիստ կեանքը և, ինչպէս երևում է, այնքան ուժեղ է նրանում այդ զգացմունքը, որ ճնշել է նորա մէջ հետաքրքրութիւնը. ոչնչից չէ երևում, թէ նա այլ ևս Ռոտոսթոյում չէ, որ հազարաւոր վերստեր գալով եկել է իւր հայրենիքի այն կենդրոնը, որը թէ բնութեամբ, թէ ընթացիկ կեանքով յուզիչ է ամենասովորական հայի համար. Մռայլ, գլուխը բարձր և, ինչպէս երևում է, համոզուած իւր արտաքոյ կարգի յատկութիւնների մասին՝ նա գնում է մի տեսակ յաղթական քայլերով և, դրանից դուրս, ինչպէս երևում է, ոչինչ չէ փնտռում և ոչ էլ ուզում է, որ ուրիշները փնտռեն իւր մէջ. Մնացած ութ հիւրերը անշուշտ մարդիկ են և կարծես խուսափում են որ և է տպաւորութիւն անելուց. Ո՞վ են դոքա, ինչ են ցանկանում, ինչն է բերել դոցա այստեղ. բացի պաշտօնական պարտականութիւնից՝ ոգևորուած են դոքա արդեօք որ և է լուսաւոր գաղափարով այս համազգային գործի վերաբերմամբ. ոչինչ յայտնի չէ. յոյսի հետ և վախ է զգացւում. մի բան անկասկածելի է, որ սոքա խորհածի տպաւորութիւն են թողնում. պարզ է, որ սոքա որոշ ուղղութեան ազդեցութեան են ենթարկւել, ոչ նպաստ այժմեայ հոսանքին. խեղճ մարդիկ. երբոր իրանց գիրը ու դրութիւնը կը հասկանան, շատ ուշ կը լինի, ժամանակը այնքան կարճ է և թիւրիմացութիւնները այնքան հաստատ. Մենք դեռ թողնում ենք այս տեսակ վատ ենթադրութիւն—չը լինի թէ այս մարդիկը ազգային տեսակէտից օգտակար բան անելու մտածմունք իսկ ունեցած չը լինեն, այլ ժողովւած են ամեն մէկը մի բան շահելու նպատակով. Երևի իւրաքանչիւր օր աւելի կը պարզէ այս մութ հարցը և մեր հետագայ դիտողութիւնները կը տանեն մեզ դէպի մի աւելի պարզ կէտ,—բայց արդեօք ցանկալի և յուսահատեցուցիչ՝ դեռ ևս չի կարելի որոշել. Նոր եկած հիւրերից մէկի վարմունքը մի տեսակ դիսոնանս էր ամբողջ խմբի վարմունքի մէջ. Եղիշէ վարդապետ Այվազեանը, Եւդոկիոյ և Ամասիոյ վիճակների պատրիարքական փոխանորդը, դեռ հազիւ իջած, հարցրեց՝ «որտեղ է Արիստակէս եպիսկոպոսի խուցը». Նորան հարցնում են—«Դուրեանի՞», «ոչ» առանձին շեշտով պատասխանում է՝ «Սեդրակեանի». և հեռաւոր ճանապարհորդութիւնից եկած այդ մարդը, իւր կացարանը դեռ չը մտած, ներկայա-

ցաւ Սեդրակեան Սրբազանին. ի՞նչ է նշանակում այդ տեսակ զգալուն լաբաւերութիւն դէպի Սեդրակեանը. ուրեմն այս մարդը տեղեակ է գործերի իսկական դրութեան հետ և բոլոր յառաջադէմ մասի պէս համանման է մտածում Նախկին ուղղութեան մասին. գրաւած է նոր կեանք խոստացող հոսանքով, թէ... զարմանալի բան, ինչու անպատճառ ծագում է և կասկածանք. այս ինչ ցաւալի դրութիւն է. բացասական ոյժերը այնպէս են վխտում մեր հասարակական կեանքի մէջ, որ հաւատը դէպի մարդիկ իր թուլութեան գագաթնակէտին է հասել. մինչև անգամ ըստ երեւոյթին համոզեցուցիչ փաստերը անկարող են դարձել վստահութիւն ներշնչել. Բայց այս Եղիշէ վարդապետը չէ՞ որ Աշխեանի պատրիարքական փոխանորդն է կարգուած. չը լինի թէ նրան ձայն տալու նպատակով է եկած. եթէ այդ այդպէս է, ինչ գործ ունի Արիստակէս եպիսկոպոսի հետ. գուցէ այդ մի խաղ էր. եթէ խաղ էր, ինչ տեսակ մարդ է Եղիշէ վարդապետը:

Փափկասէր հիւրերը իրանց ցանկացածին հասան. դոցանից 6-ը (հոգեւորականները) տեղաւորւեցան ճեմարանում, այն է՝ Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեանը առաջնորդ Թէքիրդաղի, Եղիշէ վարդապետ Այվազեան պատր. փոխ. վիճակաց Եւդոկիոյ և Ամասիոյ, Ներսէս ծ. վարդապետ Արլանեան առաջնորդ Զմիւռնիոյ, Յովհաննէս ծ. վարդապետ Արշարունի առաջնորդ Երզնկայի, Արիստակէս վարդապետ Տէր-Սարգսեան պատր. փոխ. Տրապիզոնի և Բարթողիմէոս աւագ քահանայ Սարրաճեան ներկ. Զարշամբայի. Հետաքրքիր կը լինի այս մարդկանց համար «Արեւելքի» ճեմարանի մասին կարդացած վկայութիւնների և սխալական դիտողութիւնների հանդիպումը. այդ լրագրի հրէշաւոր զրպարտութիւնները թող անձամբ տեսցեն. ինչ ասես, որ չը գրեց ճեմարանի և նորա սաների մասին նրա անարժան և հնարող թղթակիցների կողմից, որոնք այս տարի վխտում էին թէ Էջմիածնում և թէ Թիֆլիսում. այլ եւ նոքա անկարող կը լինեն խաբուած լինելու իրանց ծիծաղելի դրութիւնը և «Արեւելքի» նենգաւոր գիրը նոքա կամայ-ակամայ պէտք է անձամբ տեսցեն, եթէ միայն նոքա աչք ունեն մի բան տեսնելու. Այսպէս էր առաջին տպաւորութիւնը նորեկ պատգամաւորներից. Լաւ յոյսերով չը սկսեց առաջին հիւրերի գալուստը և անհանգիստ մտքերով անցաւ ապրիլի 28-ի գիշերը:

Ապրիլ 29. Այս օրը առանձին տպաւորութիւններ չ՚աւելացրեց նախընթացի վերայ. Եղիշէ վարդապետը ըստ երեւոյթին խոնարհական է, բայց ակնյայտնի է, որ նա յատկապէս ուղարկուած է Աշխեանի կողմից, որովհետեւ հէնց այդ օրերս փոխանորդ է նշանակուած լինելով՝ այն էլ երկու բաց թեմերի վերայ և իր թեմերում դեռ չէ եղած. և ով գիտէ, կը գնայ որ և է ժամանակ թէ չէ. Այս տարի զարմանալի շատ թուով փոխանորդներ է նշանակել Աշխեան պատրիարքը, մինչդեռ Տաճկաստանում առաջնորդը ընտրւում է գաւառական ժողովից և այդ մարմինը շարունակ գոյութիւն ունի. փոխանակ շատացնելու գաւառական ժողովներին իրանց

առաջնորդներ ընտրել, նա ինքը շտապել է փոխանորդներ կարգել, այսինքն ժամանակաւոր կառավարողներ, և այդ հոգսը նա արել է ընտրութեան վերջին ժամանակներում, այնպէս որ կառավարիչները իրանց գաւառները դեռ չեն էլ տեսած և հազիւ թէ որ և է ժամանակ տեսնեն. Աւելորդ ենք համարում առանձնապէս խօսել այդ տեսակ գործողութիւնների նպատակի մասին, Աշգեան պատրիարքը իւր «կուրսը» չի ծածկում.

Արիստակէս վարդապետը Խրիմեան Հայրիկի աշակերտն է, ոգևորութեամբ է խօսում նրա մասին. նրա հետն է և մի քահանայ, Զարշամբալի ներկայացուցիչը լաւկեաց մարդ է, բայց որքան խոր և թափանցող է նրա հայեացքը. այդ հայեացքը կարծես բուն հայկական լինի, որ յայտնի է իւր տպաւորութիւնների բարդութեամբ. Նրա մէջ կայ և ճնշուած իղձերի արտայայտութիւն և ակամայ հաշտութիւն անտանելի պայմանների հետ. Կասկած և վախ դէպի անծանօթ հանգամանքները և որ գլխաւորն է թափանցողութիւն և խոհեմութիւն. Այո, այս ծերունու հայեացքը շատ բան է ասում մարդու. բայց ինչպիսի մարդ է սա. այս կէտը հայկական հայեացքի մէջ դժւար է կարդացւում. Անողոքելի պայմանները սովորեցրել են հային ծածկել իւր իսկական ձգտումները, չը թողլ տալ նոյա արտայայտել նոյն իսկ հայեացքի մէջ. բայց միթէ այս հայկական տխուր կեանքի իսկական որդին կարող է «ոչ» գրել Խրիմեանին. այս մարդուց աւելի պէտք է լռւալ. Մնացած երկու վարդապետները Խրիմեանին հակառակ ցոյց չեն տալիս իրանց, բայց շատ և շատ կասկածելի է թւում այդ. Իսկ Հմայեակ եպիսկոպոսը, ինչպէս երեւում է, Աշըգեանականների պարագլուխներից է, որ և նկատւում է նոյն իսկ նրա արտաքին, թէև սուղ յարաբերութիւններից. Ճեմարանի խմբից նա գործ ունի միայն պ. Սեդրակ Մանդինեանի հետ, որը պ. Կարապետ Կոստանեանի հետ անընդհատ մասնակցում են Աշըգեանականների խորհուրդներին. Առհասարակ հոգևորական պատգամաւորներից շատերն էին հարցնում պ. Մանդինեանին. երևի Պոլսում և Թիֆլիսում պատւէրներ էին ստացել իրանց նպատակի համար պիտանելի մարդկանց մասին.

Այսօր տեղս ժամանեց մի նոր խումբ առաջնորդութեամբ Սահակ եպիսկոպոս Խապայեանի. Բոլոր անձնաւորութիւնների վերայ մենք չենք կարող կանգ առնել, բայց ակամայից պէտք է զբաղւենք դրանցից այնպիսիներով, որոնք դեր պէտք է խաղան մեր աչքի առաջ կատարւող ժողովրդական մեծ գործի մէջ. Խապայեան եպիսկոպոսը անշուշտ դրանց մէջն է.

Մի յայտնի կուսակցութիւն նրան մինչև անգամ կաթուղիկոսացու է ներկայացնում, թէև յայտնի չէ ինչու համար. շատ սուտ փաստեր են բերում նրա արժանաւորութիւնների մասին, որոնց մէջ առաջին տեղը բռնում է այն, որ նա պերճախօս է. վկայողներից շատերն էլ ուրիշներից են լսել այդ համբաւը, ինչպէս օրինակ պ. Փիլիպպոս Վարդանեանը, որ

անհրաժեշտ համարեց մի այդպիսի կարեւոր տեղեկութիւն հրապարակ հանելու, երեւի, յաջող ընտրութեան նպաստելու նպատակով։ Հայոց կաթողիկոսին աւելի մեծ առաքինութիւններ են հարկաւոր, քան պերճախօսութիւնը, այն էլ չը ստուգած։ Խապայեան եպիսկոպոսը դեռ նոր իջած մի կողմից ցոյց տւեց իրան,—նա ցոյց տւեց միայն, որ մանր կրքերի մարդ է. այսպիսի մի նշանաւոր ժամանակ նա չափազանց զբաղւեց ընտրականների հարցով, որի հետեւանքը եղաւ մի խիստ պատասխան մի արեւելցի կողմից նրան ուղղած. Նրա խօսքերին՝ «եթէ մենք իմանայինք, դրսում ընտրական կը վարձէինք», տրւում է պատասխան՝ «կարծում էինք, թէ Դուք կը գերադասէիք վանքի ընտրականների մի թիզաչափ հողը դրսի շքեղ տներից. եթէ ոչ Մայր-Աթոռը ինքը կարող էր վարձել Ձեր ցանկացած ընտրականը»։ Խապայեան եպիսկոպոսը շատ մօտիկ է այն վարդապետին, որը անցեալ տարի յատկապէս ուղարկւած էր Աշըգեանի կողմից եւրոպական հայ գաղթականութիւնները՝ տարածելու, որ Տաճկա-Հայաստանի դրութիւնը «շատ բարւոք» վիճակի մէջ է եւ հայերի երջանկութիւնը իւր գագաթնակէտին է հասել։ Այդ վարդապետի (Գէորգ ծ. վարդապետ Երիցեան պատր. փոխ. վիճակաց Ռումանիոյ եւ Բուլգարիոյ) խցումն է անընդհատ լինում Խապայեան եպիսկոպոսը, շրջապատւած դեռ իւր գալուց առաջ նախապատրաստւած պոլսեցի համախոհներով (օր. Կարապետ Նշաստնեան, Սեդրակ Մանդինեան), որոնց միացել է Թիֆլիսից ժամանած «Նոր-Դար»-ի շտաբը։ Այդ վարդապետներից արհամարհւող սենեակները ունին երկու-երկու լուսամուտ, նոր կահ կարասիք եւ պարսկական գորգերով փռւած են։ Որքան յառաջ են գնացել մեր տաճկաստանցի եղբայրները վայելուչ կեանքի մէջ, որ այդ դեռ նրանց համար անբաւարար է։ Խապայեան եպիսկոպոսը ինքը վեհարանին կից սենեակ է ստացել. Նրա հոգը իւր համախոհ ընկերակից վարդապետների մասին էր, ինչպէս օրինակ Ռումանիոյ եւ Բուլգարիոյ արժանապատիւ փոխանորդի, որը, պէտք է ասել, առողջակազմ ու յաղթանդամ մարդ է։ Յիշեալ Գէորգ վարդապետը իւր փայփայած մտքերը յայտնել էր եւ այստեղ, որոնց տարածման համար եւրոպական հայերի մէջ Աշըգեանից յատկապէս միսիա է ստացել։ Խապայեան եպիսկոպոսի մասին այս կարելի է ասել, որ նա իւր թեկնածութեանը ամենից աւելի ինքը պէտք է վնասի, ի մեծ ցաւ եւ ի վիշտ իւր պաշտպանողների։

Այսօրւայ եկածների թւումն է եւ Կ. Պոլսի պատգամաւոր Տիգրան էֆէնդի Կիւմիւշկէրտեան, աշխարհական պատգամաւոր Կ. Պոլսոյ եւ Արաբկիրի։ Երեւի իւր հետ կունենայ իրան նոր ընծայւած տաճկական պատւանշանը։ Զարմանալի զուգադիպութիւն. Կիւմիւշկէրտեանը եւ Օրմանեան եպիսկոպոսը անպատճառ պէտք է տաճկական պատւանշան ստանային միասին եւ այն էլ այն ժամանակ, երբ երկուսն էլ իբրեւ պատգամաւորներ կաթողիկոսական ընտրութեան Էջմիածին պէտք է գային։ Ո՞վ առաջ բե-

րեց այս զուգադիպութիւնը և ինչ նպատակով։ Այս հարցին, մենք կարծում ենք, կարող է պատասխանել Նորին Ամենապատուութիւնը Աշըգեան պատրիարքը. որքան շատ է լսւում այս մարդու անունը այժմ, բայց ինչ զգացմունքներով. ինչ է կամենում այս մարդը հայոց կաթողիկոսութիւնից։

Տաճկաստանցիները, հակառակ իրանց մասին եղած համբաւին, խիստ լռակեաց են այս անգամ. ոչինչ չէ պարզւած. Նոքա խուսափում են խնդրին ուղղակի դիմելուց. զարմանալի մարդիկ. կարծես մի գերբնական ուժ համոզմունք պէտք է դնի նրանց գլխում. բայց ով գիտէ, այդ համոզմունքը գուցէ արդէն դրւած է և այն էլ ոչ գերագոյն ուժի կողմից։ Այդպիսի հանգամանքներում միայն այնպիսի մարդիկ կարող են լուռ մնալ և ոչինչ չը յայտնել, որոնք նախապէս վճռած ունին իրանց անելիքը և այն էլ այնպիսի անելիք, որ քաշւում են հրապարակ հանելուց։ Աշըգեան պատրիարքը օրւայ հերոսն է. ով որ այստեղ է եկել, թէ պատգամաւոր թէ հանդիսատես, ամենից առաջ նրանով է զբաղւած։ Այժմեանից կարելի է ասել որ Աշըգեանի խնդիրը (այժմ դա օրւայ խնդիր է) միացնելու է բաժան բաժան ուժերը և գործունէութիւն է ներշնչելու նրանց, որովհետև պատգամաւորների ստւար մեծամասնութիւնը, ես առաւել աշխարհական պատգամաւորների, լաւ չէ տրամադրւած դէպի Աշըգեանը և, ինչպէս երևում է, բացասական հանգամանքը պիտի հիմք դառնայ այս անգամւայ ընտրութեան նախապատրաստական կազմակերպութեանը։ Այսպիսի միահամուռ և սուր ատելութիւն շատ քչերին է վիճակւել ներշնչելու իւր ժամանակակիցներին, բայց, չը նայելով այս հանգամանքին, երկիւղ կայ նրա թեկնածութեան մասին։ Ըստ երևութին այս հանգամանքը անբացատրելի պէտք է թւայ, թէ ինչպէս ընդհանուրից մերժւողը կարող է հնարաւորութիւն ունենալ ամենայն հայոց կաթուղիկոս դառնալու. բայց անբացատրելին բացատրելի է դառնում, երբ մենք մօտիկից գիտենք պատգամաւորներից հոգևորական դասը, թէ այնտեղի և թէ այստեղի։ Տաճկաստանի հոգևորականներից դժւար թէ մի քանիսը գտնւեն, որ վստահութիւն ունենան նրան «ոչ ընտրեմ» գրել. այդ ուրիշ հարց է թէ «ընտրեմ» գրողը ինչից դրդւած պէտք է այդ անի և հարցն էլ, կարծեմ, շատ միամիտներին կարող է դժւար լուծանելի թւալ։ Շնորհիւ անբնական և արտասովոր հանգամանքների՝ Աշըգեանը Տաճկա-Հայաստանում դառել է մի հրամայող ուժ, որի ձեռքում կայ այնպիսի մի ահեղ զէնք, որպիսին է տաճկաց կառավարութիւնը։ Զատագովելով ամենայն ինչ, ինչ որ տաճկին է վերաբերում և դատապարտելով ամեն մի ցանկութիւն, որ չէ հաշտւում այժմեան հանգամանքների հետ, նա ամենահաճելին է դառել Օսմանեան պետութեան աչքում։ Ո՞ր մի հոգևորականը, որ նրանից այժմ և տաճիկ կառավարութիւնից շարունակ կախումն ունի, յանդգնութիւն կ՚ունենայ «ոչ ընտրեմ» գրել. ես առաւել որ Հայոց Կաթուղիկոսացուի անձնաւորութիւնը ոչ մի վառ ազդեցութիւն չէ ունենալու նրանց վերայ և բացի այս անգամից

գուցէ ոչ մի անգամ էլ չատերը գործ չունենան ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ։ Այժմ հասարակաց շահի պաշտպաններին մնում է բոլոր ուժերը լարել, ամեն ջանք գործ դնել, որ Աշըեանի անունը հանէ թեկնածուների ցանկից և դրանով հնար լինի ազատել Տաճկաստանի հոգևորական պատգամաւորների մեծամասնութիւնը և ոչ սակաւներին նոյն իսկ աշխարհական պատգամաւորներից գայթակղիչ և փորձալից դրութիւնից, փակելով այդպէս բոլոր Աշըեանականների միակ ճանապարհը։ Նոքա անզօր կը լինեն, երբ ստիպողականութիւնը տաճկահայ պատգամաւորների վերաբերմամբ կը վերանայ։ Երկու կողմն էլ այս բանը լաւ հասկանում են և այժմ այդ ուղղութեամբ են գործում։ Մի կողմը աշխատում է Աշըեանին անպատճառ ցանկի մէջ ձգել, իսկ միւս կողմը այս ընտրութեան մէջ ամենավտանգաւորը հէնց այդ է համարում և բոլոր հակա-Աշըեանական ուժերը իրանց առաջին, բայց ամենամեծ, ջանքը այստեղ են գործ դնելու։ Աշըեանական խումբը դեռ առանց հրամանատարի է։ Օրմանեան եպիսկոպոս և Աբգար Յովհաննիսեան, աշխարհական պատգամաւոր Բրուսայի, դեռ չեն հասել։ Ո՞վ կարող է առանց ժպիտի կարդալ «Աբգար Յովհաննիսեան պատգամաւոր Բրուսայի»։ Ո՞վ էր այդ հոգատարը։ Բրուսան ընտրած էր արդէն Տիգրան էֆ. Կիւմիւշկէրտանին, բայց երբ Տփխիսի ընտրութեան գուժը հասնում է Կ. Պոլիս, և ահա պ. Աբգար Յովհաննիսեանը իսկոյն և եթ դառնում է պատգամաւոր Բրուսայի։ Որքան խնամատարութիւն, որքան հոգատարութիւն, որքան հեռատեսութիւն Տփխիսի ex-պատգամաւորի վերաբերմամբ։ Եւ ո՞վ էր այդ կարեկից հոգատարը։ Զարմանալի բան, ինչ հարց, որ դնում ես՝ պատասխանը նոյնն է գալիս և դրա համար աւելորդ ենք համարում կրկնողութիւններ անել, ընթերցողն էլ փոքր ինչ հեռատեսութիւն պէտք է ունենայ։ Բայց անկարելի է աննկատելի թողնել Բրուսայի գաւառական ժողովի գովելի պարկեշտութիւնը և հնազանդութիւնը։ Ում համար հրամայում են, նրան էլ ընտրում է։ Առաջարկել էին Կիւմիւշկէրտանին, նրան էին ընտրել։ Ամեն մի ընտրող ժողով դրանով իւր պարտքը լրացրած պէտք է համարէր, բայց համեստ և դէպի մեծը երկիւղած Բրուսան այդպէս չէ։ Նրան յանկարծ, անսպասելի կերպով ասում են՝ «Նորից ընտրութիւն արէք և ընտրեցէք պ. Աբգար Յովհաննիսեանին», և համեստ Բրուսան առանց հարց տալու թէ «առաջին ընտրութիւնը եթէ ընտրութիւն չէր հապա ինչ խաղ չէր», անխօս կազմում է իւր պատկառելի խորհուրդը և ընտրում է այժմ ո՛չ իւր գաւառացու և ո՛չ մէկին ամբողջ Տաճկաստանից, այլ աշխարհի մարդու, որի անունը առաջին անգամն է լսում։ Եւ այս ընտրութիւնը կարող էր լինել միայն հեռագրով։ Հաղորդակցութեան միւս միջոցները բոլորովին անզօր էին այս դէպքում, այնքան կարճ էր ժամանակամիջոցը։ Մեր հեռագիրը ութերորդ հրաշալիքը չէ համարում, քանի որ միայն ապրիլի 22-ին վճռւեց պ. Յովհաննիսեանի պատգամաւորական գործը Թիֆլիսում։ Թէ ինչպէս այս կարճ

ժամանակում կատարեց Բրուսան իր ընտրութիւնը, մարդ մնում է զարմացած. Խեղճ, խեղճ Բրուսա. մինչև այժմ չէինք ճանաչում քեզ, լաւ էր, որ մնայիր քո անյայտութեան մէջ քո բոլոր ընտրողական ժողովներով, քան թէ այդ տեսակ վիճակի հասնէիր։

Կիւմիւշկէրտանին Բրուսայի ձայնի կորուստը զգալի չը պէտք է լինի. ասում են, որ այդ մարդը մի քանի ձայներ ևս ունի. անշուշտ այդ ձայները յանձնուած կը լինեն նրան մի որոշ անձնաւորութեան քէֆ տալու նպատակով. ում համար է բերած եղել Կիւմիւշկէրտան այդ ձայները, մենք յետոյ կը տեսնենք, բայց բանը նրանումն է, որ Կիւմիւշկէրտան էֆ. մի անախորժ հիասթափում պէտք է զգայ. Մայրաքաղաքի պատգամաւորը և նրան ընտրողները չեն իմացել, որ նա բացի երկուսից աւելի ձայն չէ կարող ստանալ, բայց ևս առաւել անախորժ պէտք է թւի այդ տխուր ճշմարտութիւնը նրա համար, ով որ պէտք է ստանար այդ ձայները։

Առ այժմ եկած աշխարհական պատգամաւորներից հէնց սկզբից յայտնի աստիճանի վստահութիւն են ներշնչում Ռոտոսթոյի պատգամաւոր բժ. Նէվրուզեանը և Զմիւռնիոյ պատգամաւոր պ. Գարեգին Ցովհ. Բարազեան։ Սոքա մեծ հետաքրքրութեամբ են զբաղւած գործերի դրութեան ուսումնասիրութեամբ. ուզում են պարզել իրանց Մակար կաթողիկոսի ժամանակւայ և այժմւայ ուղղութիւնները, նոյնպէս և ճեմարանում տիրող ներկայ ուղղութիւնը։ Զարմանալով են վերաբերւում, իմանում են, որ նախկին ռէժիմը չարունակ ձգտել է սահմանափակել կրթութեան ծաւալը ի վնաս բնագիտական և մաթեմատիկական առարկաների, և որքան կարող է կրճատել ուսանողների թիւը, դարձնելով ճեմարանը մի փոքր գիշերօթիկ պանսիօն, միևնոյն ժամանակ անելով նրա վերայ այնպիսի ծախք, որը ունին հարիւրաւոր սաներով ուսումնարանները. Այո, շատ բան կայ զարմանալու մեր տաճկաստանցիների համար. միայն այդ չէ որ ճեմարանի սահմանափակ կրթութիւն ստացող աշակերտը աւելի թանկ է նստում Մայր-Աթոռին, այսինքն ազգին, քան եթէ նա ուսանէր Բերլինում, ի հարկէ ոչ ճեմարանի ծրագրով։ Սոցա համար կարելի է ասել, որ կ՚իմանան վերջ ի վերջոյ, որ սուտ բարեպաշտների գոռում գոչումը ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ վախ իրանց հրէշաւոր գործերի հասարակութեան առաջ բացւելու պատճառով և իրանց անարժան դերի մշտական կորստեան։ Թող տեսնեն, թէ որքան վէրքերով ծածկուած է համազգային Մայր-Աթոռը, թող իմանան թէ ինչպէս հայ գիւղերը լցւած են տգէտ և անարժան քահանաներով, թող տեսնեն, թէ ինչպէս Մայր-Աթոռի ընդարձակ կալւածները անպտուղ և ապարդիւն մնացած են եղել ժողովրդի համար, դառնալով ասպարէզ բացառական և վնասակար ուժերի։ Ո՛չ. Տաճկաստանի աշխարհական պատգամաւորների գալուստը լաւաց նշաններ տարածեց մռայլ մթնոլորտի մէջ, թէև դրանցից մի քանիսը ամբողջ ժամանակ լուռ և մռայլ զբաղւած են ուրիշի գործածութեամբ։ Այդ օրը եկել են և Ռու-

տանի պատգամաւորներից մի քանիսը՝ պ. Աթարբէգեան Արցախի պատգամաւորը, Լալայեան. Շամախու պատգամաւորը, նոյնպէս և Պարսկաստանի և Հնդկաստանի պատգամաւորը, պ. Համբարձում Առաքելեանը։

Ռուսաստանի պատգամաւորները անշուշտ մեծ դեր պէտք է խաղան այս ընտրութեան ժամանակ. սոքա գործերի դրութեան հետ լաւ ծանօթ են. սոքա արդէն գ ա յ լ ը գ ա ռ ի և գ ա ռ ը գ ա յ լ ի տեղ չեն ընդունում. այդ բաւական չէ. կարող կը լինեն տաճկաստանցիների աչքերն էլ բանալ, որ նոքա ևս այդ դրութեան մէջ չընկնեն. Աշխարհական պատգամաւորները պէտք է վճռեն այս ընտրութիւնը, չը նայելով որ թւով հոգևորականներից քիչ են. Սրանք անձնական հաշիւներ չեն կարող ունենալ այս դէպքում, բացի մի քանիսից. բաւական է յիշել Բրուսայի պատգամաւորի տարօրինակ ընտրութիւնը։

Ապրիլ 30. Հոգևորական և աշխարհական պատգամաւորները անընդհատ գալիս են. ինչ թւով կը վերջանայ ամբողջը՝ դեռ չը գիտենք. ինչպէս երևում է ժողովը թւի կողմից նշանաւոր և առաջուայ կարգի է լինելու, իսկ պարապ կատարելու կողմից—յետոյ կը տեսնենք. Նորեկների թւում առանձնապէս աչքի է ընկնում Տրապիզոնի պատգամաւոր Յարութիւն էֆ. Շահրիկեանը. սա իւր գաղափարներով և լրջմտութեամբ աւելի յիշեցնում է Ռուսաստանի ինտելիգենցիայի առաջնակարգ ներկայացուցիչներին. անկարելի է ուրախութիւն չը զգալ տեսնելով, որ Տաճկաստանի հասարակութիւնը զուրկ չէ իսկապէս լուսամիտ և յառաջադէմ անձնաւորութիւններից հակառակ մինչև այժմ եղած թիւր կարծիքներին. Տաճկաստանցի պատգամաւորները միանգամայն ընդմիշտ պէտք է հերքեն նրանց մասին եղած չափազանց աննպաստ կարծիքը։ Շահրիկեանը դեռ երիտասարդ է, լուրջ և մտածող դէմքով, խօսում է համոզեցուցիչ և սրամիտ փաստերով, առանց որ և է փքուն խօսք գործածելու. անկարելի է որ սա մեծ ազդեցութիւն չունենայ իւր հայրենակիցների վերայ։

Այսօր առաւօտեան յայտնի եղաւ Նիկոմիդիոյ պատգամաւորների գալուստը, որ տեղի է ունեցել նախընթաց գիշերը։ Ստեփաննոս եպիսկոպոսին ընդառաջ էին գնացել մինչև Փարաքար բաւականաչափ թւով մարդիկ, որոնք սպասել էին նորին սրբազնութեան մինչև գիշերւայ ժամի 10։ Տաճկաստանի հոգևոր պատգամաւորներից ամենից լաւ համբաւ ունեցողը Ստեփաննոս եպիսկոպոսն է. Սորա մասին համոզմունք կայ, որ ոչ թէ ինքը միայն ուղղաբար կը վերաբերւի ընտրութեան գործում, այլ և բարերար ազդեցութիւն կունենայ իւր համաերկրացի հոգևորական ընտրողների վերայ. Լինելով գաղափարական և անշահասէր, նա միևնոյն ժամանակ վճռող և զօրեղ կամք ունի. Առաջին տպաւորութիւնը սրբազանի խիստ գոհացուցիչ է. Նրանում նկատւում է սաստիկ անտարբերութիւն դէպի արտաքինը և ձևականը. նորան նայելուս մարդ ակամայից մտածում է, որ այս մարդու մէջ մանր և սովորական կրքերը ոչ մի դեր չեն կա-

տարում։ Այդ հանգամանքով պէտք է բացատրել նորա անպաճոյճ և պարզ շարժմունքները և խօսակցութեան ձևերը։ Այն ինչ որ ուրիշների համար արտասովոր է, նրա խօսակցութիւնների սովորութեան նիւթն են։ Ծանր հասարակական խնդիրներ են, ինչպէս երեւում է, միշտ զբաղեցնում նրան։ Սորա հետ է և Նիկոմիդիայի աշխարհական պատգամաւորը՝ Գասպար էֆ. Գասպարեան, որ մի խստաշէմ և նահապետական մարդ է. բայց իւր համոզմունքներով և ձգտումներով արժանի ընկեր իւր առաջնորդի։ Բոլոր խօսակցութիւնների և վերաբերութիւնների ժամանակ միւսները յայտնի աստիճանի «բոլիտիկա կընեն»։ Այս երկուսն են միայն, որ ուղղակի և պարզ դիմում են խնդրին և վճռողապէս յայտնում են իրանց համոզմունքը, որի վերայ անկարող է ազդել ոչ մի օտար հանգամանք։ Նախապէս կարելի է ասել, որ այս երկուսի ազդեցութիւնը տաճկաստանցիների վերաբերմամբ զգալի պէտք է լինի։

Նկատւում է, որ տաճկաստանցի պատգամաւորները խուսափելու են ռուսաստանցի եպիսկոպոսի թեկնածութիւն ընելուց։ Այս տեսակ վերաբերման մէջ բարդ հաշիւներ կան։ Նրանց մէջ նոքա, որոնք բաղձում են անպատճառ իրագործել Խրիմեանի կաթողիկոսութիւնը, անհրաժեշտ են համարում, որ Ռուսաստանից երկրորդը չը լինի։ Թէպէտ այդ տեսակ ծրագրի պարագլուխները համակրում են Ռուսաստանի հէնց այն եպիսկոպոսներին, որոնց թեկնածութիւնը յայտնի աստիճանի հաւանականութիւն ունի, այն է Երեմիա և Արիստակէս եպիսկոպոսների։ Պատգամաւորները արդէն սկսել են միմեանց հետ ծանօթանալ և զգալով, ժամանակի կարճութիւնը, տագնապով զբաղուած են ընտրողական կազմակերպութեամբ։ Համամիտ ույժերը արդէն սկսում են համախմբուել. այժմ արդէն կարելի է տեսնել, թէ ինչ մրցող տարրեր կան։

Այսօր առաջին անգամ մինչև այժմ եկած աշխարհական պատգամաւորները մտքերի փոխանակութեան համար խմբւեցին և այդ առաջին բանակցութիւններից պարզւեց որ Տաճկաստանի և մեր աշխարհական պատգամաւորների մէջ ընտրելիների մասին փոխադարձ զիջումներով կարող է համերաշխութիւն կայանալ։ Նոյնպէս այդ ժողովում իմացուած տեղեկութիւններից յայտնւեց, որ Տաճկաստանի հոգևոր պատգամաւորները ձայն են տալու Աշըգեանին։ Այսպիսով ուրեմն մթութիւն ու անյայտութիւնը անյայտանում է և, լաւ թէ վատ, իրերի իսկական դրութիւնը պարզւում է. ապառնեան գործիչները կ'իմանան, թէ ինչ հանգամանքների մէջ են։ Ուրախալին այն է, որ արդէն կարելի է նախատեսել, որ աշխարհական պատգամաւորները մի ուժեղ կենդրոն կը կազմեն, որը շնորհիւ իւր բարոյական և մտաւոր առաւելութիւններին՝ առաջին գործող ույժը պէտք է լինի այս ընտրութեան ժամանակ և միանալով հոգևորական ընտրողների ընտիր մասի հետ, որը խմբուած է Երեմիա և Արիստակէս եպիսկոպոսների շուրջը, կը վճռի թէ թեկնածուների և թէ ընտրելիների հարցը։

Այս խմբին հակառակ ուժը բաղկանում է միմիայն Աշըգեանականներից և առաջին կուլը պէտք է լինի այդ անձնաւորութեան համար, որից յետոյ դեռ չէ կարելի նախատեսել Աշըգեանականների ապագայ ծրագիրը։ Թերևս իրանք էլ այդ բանը պարզած չը լինեն. այսինքն ինչ պէտք է անել՝ Աշըգեանի գործը տանել տալուց յետոյ։ Այժմեան Աշըգեանականները շատ նման են 1885 թուականի Մակարին ընտրողներին և մասամբ էլ նոյն անձինքներից բաղկացած. Նոքա շարունակ աշխատում են ծածկել իրանց ծրագիրը և շատ անգամ հակառակորդին թակարդ ձգելու համար հակա-Աշըգեանական մոքեր են յայտնում, բայց որովհետև գործ ունին փորձառու և լաւ հակառակորդի հետ, իրանց վարմունքով բացի ծիծաղ յարուցանելուց՝ ուրիշ նպատակի չեն ծառայում. դոցա խոհականութիւնն էլ առ այժմ դժուար է որոշել։ Դրանցից աւելի որոշ է և ճանաչւում է այն մասը, որը բաղկացած է Ռուսաստանի հոգևորական ընտրողներից. վերջիններիս մասին կարելի է ասել որ յամառ կերպով պէտք է ձգտեն այդ նպատակի համար, աւելի զօրաւոր պատճառներ ունենալով, քան թէ Տաճկաստանի հոգևորականները։ Պատգամաւորների գալը անընդհատ շարունակւում է. այսօր եկաւ և Տփխիսի պատգամաւոր պ. Գրիգոր Արծրունին, որը անշուշտ պէտք է աւելացնի աշխարհական պատգամաւորների եռանդը և արդարացնի համերաշխութեան գործը ընտրելիների վերաբերմամբ բոլոր հակա-Աշըգեանականների մէջ։ Ոչ ոք չէ կասկածում Տփխիսի պատգամաւորի դերի մասին այս գործում, շնորհիւ նորա հեղինակութեան, որ ունի հասարակութեան մէջ։

Էջմիածնում արտասովոր և աշխոյժ կեանք է զգացւել. բոլոր ճանապարհները անընդհատ մարդիկ են բերում այստեղ. կազմւում է մի մեծ և բազմատեսակ ամբոխ, որը լուռ և լարւած հետևում է ընտրողական բոլոր գործողութիւններին։ Այլ ես դժուար է բացառապէս պատգամաւորների գալստեանը հետևել. մէկ մէկու ետևից, բազմաթիւ և փոփոխւող տպաւորութիւնների մէջ անհնարին է այդ կատարել։

Այսօր երեկոյեան կայացաւ մի նշանաւոր ժողով բաղկացած Ռուսաստանի և Պարսկաստանի աշխարհական պատգամաւորներից և միաբանութեան ներկայացուցիչներից, բացի վերոյիշեալ Յովհաննէս վարդապետ Դպիր-Վարդանեանի և Յովհաննէս եպիսկոպոս Տաթևացու։ Այդտեղ պարզւեց որ միաբանութեան ընտրելիներն են՝ առաջին՝ անպայման Խրիմեան, իսկ Ռուսաստանից (? խմբ.) Երեմիա և Արիստակէս եպիսկոպոսները։ Այդ ժողովում իմացւեց նոյնպէս, որ Երեմիա և Արիստակէս եպիսկոպոսները պատրաստ են հրաժարւել թեկնածութիւնից Խրիմեանի յաջողութեան համար և Աշըգեանին միանգամայն ընդմիշտ նոյն իսկ 4-ի ցուցակից բոլորովին հանելու համար։ Մեր աշխարհական պատգամաւորները այն է Ռուսաստանի և Պարսկաստանի (վերջիններս երկուսն էլ ռուսաստանցիներ են—Ատրպատականի՝ Մելիք-Ազարեան, Իսպահանի և Հնդկաստանի՝ Համբարձում

Առաքելեան) բոլորն էլ անպայման Խրիմեանական են և հակա-Աշըգեանական. Խրիմեանի ընտրութիւնը յաջողացնելու և Աշըգեանի անունը մէջտեղից վերցնելու ջանք չեն խնայում. Առանձին աչքի է ընկնում իւր եռանդուն և առանց հանգստի գործունէութեամբ պ. Համբարձում Առաքելեանը. Ամեն տեղ նա ներկայ է, բոլոր տաճկաստանցիների հետ սրտէն ծանօթ, շարունակ բանակցում է տաճկաստանցիների միաբանութեան, իւր ընկերակիցների հետ. սրա մասին կարելի է ասել, որ նրա աշխատանքը և չարչարանքը, այս կամ այն անյարմարութիւնը, մի րոպէ անգամ չեն տատանեցնում. երբէք չէ կարելի նրան պատահել հանգիստ դրութեան մէջ, միշտ շտապում է ընտրութեան վերաբերութեամբ ամեն բանի էլ հասնելու. Շատ գործունեայ էին նոյնպէս Արցախի պատգամաւոր պ. Ներսէս Աթաբէգեանը. Երեւանի պատգամաւոր պ. Ռուբէն Հասան-Ջալալեանը, որը իրաւացի կերպիւ մեծ վարկ ու հեղինակութիւն ունի, առանձին ներգործական դեր չի կատարում. Նա, որին կը վայելէր պարագլուխներից մէկը դառնալ այս գործում, կարծես, խուսափում է այդ դերից. Նա փոխանակ ազդելու գործերի ընթացքի վրայ իւր բուռն միջամտութեամբ, նա ինքը կարծես դիտող և ուսումնասիրող է հանդիսանում. գուցէ յարգելի պատճառներ ունէր այդ իսկապէս պատկառելի անձնաւորութիւնը իւր այդ տեսակ յարաբերութիւնների նկատմամբ. մենք այդ չը գիտենք, մենք նկարագրում ենք այն, ինչ որ դիտել ենք. Նա ինքը ասում է, որ իւր ծրագիրը արդէն կատարուած է լրագրով, և որից նա մի քայլ չի շեղւելու. Բայց և այնպէս նոյն իսկ այդ ծրագրում մնալով, անհրաժեշտ էր աւելի եռանդուն գործունէութիւն.

Պր. Գրիգոր Արծրունին, ինչպէս և պէտք էր սպասել, մեծ տակտով և խոհեմութեամբ է տանում գործը, շարունակ հետեւելով նրա բոլոր ելեւէջներին.

Մայիսի 1. Այսօր մի յուզիչ և ուրախալի լուր տարածւեց, թէ Տաճկա-Հայաստանի ներքին գաւառների ներկայացուցիչները գալիս են, և որ բարձրացած Արաքսը նրանց չէ թողնում անցնել, և ստիպուած են սպասել միայն 18 վերստ հեռու լինելով Էջմիածնից. Ամեն. տեղակալը Լեոն աբեղային ընդառաջ ուղարկեց, կարգադրելով ամեն միջոցներ գործ դնել պատգամաւորներին անցկացնելու համար. Կողմնակի մարդիկ յառաջ գնացողներ եղան. ամբողջ օրը առաւօտից սպասողական դրութեան մէջ անցաւ. երեկոն հասաւ, բայց պատգամաւորները չերեւացին. Վերջապէս տխուր ճշմարտութիւնը պարզւեց, որ լուրը սուտ էր. Բայց ստուգւում է Էրզրումի հոգևոր և աշխարհական պատգամաւորների գալուստը. վերջինս ներկայացուցիչ է և Մուշի թեմի. Ուրեմն Մուշ և Էրզրում, ներքին գաւառներից երկու ամենանշանաւորները կը մասնակցեն այս ընտրութեանը. Տաճկաստանցի հոգևոր պատգամաւորները ներքին գաւառների պատգամաւորների չը գալու կամ ուշանալու պատճառը այսպէս են բացատրում.

Աշխեան պատրիարքը, ցանկանալով իրագործելի անել տաճկաստանցոց մասնակցութիւնը կաթողիկոսական ընտրութեան մէջ, անհրաժեշտութեան մէջ է գտնուած եղել սակաւաթիւ գնացողների ցուցակ ներկայացնել տաճկաց կառավարութեանը, Թոյլտուութեան համար։ Բայց մենք զարմանում ենք, ինչու Նորին սրբազնութիւնը այդ ցուցակը կազմելիս գլխաւորապէս աչքի առաջ է ունեցել Անատոլիայի և Ռումինիայի գաղթականութիւնները, խոպան մնացած լինելով բուն Հայաստանը։ Նոյն պատգամաւորները ասում են, որ պատրիարքի միջամտութեամբ վերջերս տեղեկութիւն ունեն, որ միացածներին էլ Թոյլտուութիւն է տրուած։ Բայց կը հասնեն արդեօք այդ Թոյլտուութիւն ստացողները, Թէ ոչ, ընտրութեան օրը։ Այդ Թոյլտուութիւնից հնար կունենան օգտուելու միայն սահմանակից գաւառները, ինչպէս և խիկարէս լինելու է։ Էրզրումինն արդէն ճանապարհին են և գուցէ մինչև մայիսը 3-ը հասնեն. Ալաշկերտինն էլ Թերևս գան, բայց միացածները ոչ մի գործադրութիւն չեն կարող անել այդ անգամ Թոյլտուութիւնից։ Իսկ Խապայեան եպիսկոպոսը մի ուրիշ պատճառ էլ էր ակնարկում, ցանկանալով նրան միակը դարձնել. իբր Թէ Սինոդը բաւականաչափ վաղօրոք չէր ուղարկել հրաւիրագրերը։ Բայց այդ պատճառը միայն զարմանք պատճառեց լսողներին. նոյեմբերից մինչև մայիս քիչ էր, որ բոլոր գաւառները տեղեկանային և ընտրութիւն անէին։ Այդ պատճառը անհիմն է և այն իրական փաստը աչքի առաջ ունենալով, որ պատգամաւորներ չեն եկել ոչ Թէ որովհետև չեն ընտրուած մինչև այժմ, այլ որովհետև Թոյլտուութիւն չեն ստանում վերը յիշած հանգամանքների շնորհիւ Արդէն այստեղ է և պ. Արգար Յովհաննիսեանը, Բրուսայի տարօրինակ ձևով ընտրուած պատգամաւորը։

Զարմանալի բան, երբ որ պ. Արգար Յովհաննիսեանի գալստեան լուրը տարածուեց, ընդհանուրին այնպիսի զգացմունք տիրեց, որպիսին զգում են այն ժամանակ, երբ իմացւում է, որ հօտի մէջ գայլ է մտել։ Բոլոր բացասական ուժերի համար կազմակերպիչ և ղեկավար եկաւ. յայտնի է, որ այդ տխուր դերում մեր հասարակական կեանքում բաւական ժամանակ է, որ պ. Արգար Յովհաննիսեանը իր երկրորդը չունի։ Այդ բաւական չէ, որ նա Աշխեանին է ցանկանում, նորա հետ միասին նա դնում է և Խրիմեանի Թեկնածութիւնը։ Եթէ չը լինէր ամենալաւը՝ այս մի տեսակ հեգնութիւն և չարախնդութիւն պէտք էր համարել մեր ժողովրդի վերաբերմամբ. բայց այստեղ աւելի գործնական հանգամանք կայ քան Թէ լոկ չարախնդութիւնը։ Պարոն Յովհաննիսեանը Խրիմեանի մէջ երկու իրան նպատակայարմար կողմ է գտնում. առաջին դնելով նորա Թեկնածութիւնը, նա ուզում է իրան ցոյց տալ ժողովրդին համակրողը, լաւ համոզուած լինելով, որ հակառակ վարմունքը նրան շատ Թանգ կը նստի և երկրորդ, որ ամենագլխաւորն է, նրա համախոհների համոզմամբ Խրիմեանը կ'ապահովացնի Աշխեանի կաթողիկոսացումը։ Որ պ. Արգար Յով-

հաննիսեանը Խրիմեանի անունը տալով իբրև կաթուղիկոսացու հակառակ ցանկութիւն ունի նորա վերաբերմամբ, դա արդէն պարզւում է և անկարելի կը լինի ծածկել փաստերի թէկուզ ամենախորամանկ նենգութեամբ, որի մէջ «Արձագանք»-ը առանձին հմտութիւն ունի։

Այսօր տեղի ունեցաւ մի նոր ժողով աշխարհական 17 պատգամաւորների՝ նախագահութեամբ Տիգրան էֆ. Կիւմուշկերտեանի։ Կ. Պոլսում գուցէ Կիւմուշկերտեանի վերայ շատ յոյսեր դրած լինեն. բայց դժւար թէ նա իրագործի։ Նա անտարբեր և չը հետաքրքրուած է երևում այս գործում։ Աւելի ուխտաւորի քան թէ պատգամաւորի տպաւորութիւն է անում։ Նրան ընտրելու ժամանակ, բացի նրա հարստութիւնը, դժւար թէ այլ կարգելի հանգամանք աչքի առաջ ունեցած լինէին։ Աշըգեանի վերաբերմամբ, բոլոր հանգամանքներից կարելի է ենթադրել, որ յայտնի պարտաւորութիւն պէտք է որ դրուած լինէր նրա վերայ։ Այդ ժողովի նպատակն էր նախագծել 4 ընտրելիների ցանկը միահամուռ խորհրդակցութեամբ։

Խրիմեանի մասին տաճկաստանցիները մինչև այստեղ գալը գուցէ առանձնապէս մտածած էլ չը լինէին. մինչև անգամ ասում են, որ Իզմիրլեանին գերադասելիս են եղել նրանից, դիտաւորութիւն ունենալով նրա հետ դնել և Աշըգեանին։ Բայց Ռուսաստան մտնելով նոքա համոզւեցին, որ ժողովրդի միակ ցանկալին Խրիմեանն է։ Հետևաբար նոցա ոչ պատիւ կը բերէր, և ոչ էլ մի որ և իցէ հաշիւ կարող էր լինել ազգի ընդհանուր ձգտման հակառակել։ Պէտք է խոստովանած, որ աշխարհական պատգամաւորները ընդհանրապէս իրանց դիրքին արժանի են հանդիսանալու և ի դերև չեն հանելու ազգի իրանց վերայ ունեցած վստահութիւնը։ Նրանց մէջ շատ քչերը կան, ինչպէս Բրուսայի պատգամաւորը, որ այդ ժողովից առաջ խորհրդակցել էր Կիւմուշկերտեանի հետ՝ համաձայնութիւն կայացնելու միայն առ երես, երևի Կիւմուշկերտեանին թիւրիմացութեամբ թունդ Աշըգեանական կարծելով։ Կիւմուշկերտեանը, մեր կարծիքով, իսկապէս ոչ ոքի կուսակից չէ։ Հարուստ մարդ է, ընտրել են, նա էլ եկել է։ Աշըգեանի համար երևի մտածել է՝ հնարաւորութիւն լինի, ձայն կը տայ, եթէ ոչ՝ առանձին նրա համար գլուխ պատռելու չէ։ Այդ ժողովում Խրիմեանին ընդունեցին բոլորը միաձայն։ Վիճաբանութիւն ծագեց երկրորդ թեկնածուի մասին։ Ռուսաստանի պատգամաւորների մեծամասնութիւնը պնդում էր Սեդրակեանի վերայ, առաջ բերելով նորա արժանաւորութիւնները— անշահասիրութիւնը, վարչական տաղանդը և ուրիշներից բարձր կրթութիւնը, նմանապէս և ժողովրդականութիւնը։ Կիւմուշկերտեանը պատասխանում է, որ մինչև այս տարի իրաւ է, որ Սեդրակեանը ռուսաստանցի եպիսկոպոսներից ամենաժողովրդականն էր և իրանց մէջ, բայց այս տարի այնքան լուրեր և զրպարտութիւններ տեղացին նորա մասին, որ նրանց մէջ մի տեսակ հակառակ հոսանք է գոյացել նրա դէմ. այն մտքով, որ իբր

թէ նա Հայաստանեայց եկեղեցու վերափոխող կարող է լինել։ Այդ բանին Տ. Արծրունին պատասխանում է, որ Սեդրակեանը մի կէտ անգամ չի համաձայնիլ փոխել Հայաստանեայց եկեղեցու դաւանաբանական մասից, այլ նրա ձգտումը կայանում է նրանում, որ բարձրացնի եկեղեցին իւր այժմեան ողբալի վիճակից, անհնարին անելով տգէտ և անարժան անձնաւորութեանց հոգևորական կոչում ստանալը, բարւոքել գիւղական եկեղեցականների վիճակը, տալ համայնքներին արժանաւոր հովիւներ, բարւոքել ուսումնարանների դրութիւնը, աւելի մօտեցնելով նրանց ժամանակի պահանջներին. մասնագէտների և ձեռնհաս մարդկանց միջոցով կառավարել վանքի ընդարձակ կալուածները և բարւոքել ամբողջ տնտեսութեան կազմակերպութիւնը։ Տաճկաստանցիք յայտնում են, որ այդ միևնոյն ժամանակ և իրանց ցանկացածն է. բայց նորից պնդում են, որ եթէ իրանցից պահանջւում է որ Աշըգեանին ցանկից հանեն, ռուսաստանցիներն էլ չը պիտի դնեն Սեդրակեանի թեկնածութիւնը։ Այս պահանջը մենք ոչնչով չենք կարող բացատրել, եթէ ոչ նրանով, որ տաճկաստանցիները ի սրտէ չը ցանկանալով Աշըգեանին, բայց նրան ձայն տալու անհրաժեշտութեան մէջ գտնւելով, ուզում էին մի շօշափելի պատճառ յառաջ բերելով դուրս գալու այդ նեղ դրութիւնից, թէ նրանք ռուսաստանցիների ծանր զիջման խոնարհելով իրանք ևս ստիպւած զիջում արին։ Նրանցից ոմանք չէին թագցնում և այս տեսակ միտք, որ Խրիմեանի կաթողիկոսացման համար Սեդրակեանը կարող է զօրեղ մրցող հանդիսանալ։ Նոքա առաջարկում էին իբրև երկրորդ՝ Իզմիրլեան Մատթէոս եպիսկոպոսին։ Իզմիրլեանը թէպէտ քիչ ծանօթ է ռուսաստանցիներին, բայց եղած կարծիքը ի նպաստ նորա է, հետևաբար նրան դարձնելով երկրորդ թեկնածու, ընտրութիւնը պէտք է յաջող համարել։ Որոշ վճիռ չը կայացնելով ցրւում է ժողովը, բայց նրան մասնակցողները դուրս են գալիս այն համոզմամբ, որ Խրիմեանից յետոյ Իզմիրլեանը ամենահաւանական թեկնածուն է։

Աշըգեանի հարցը համարեա վերջացած էր, որ սրբ. Օրմանեանը նոր եկաւ։ Այն գործը, որի համար նա ուշանալով գալիս էր Բոսֆորից, նա դեռ ճանապարհին էր, որ տարւեց։ Նորա վերայ շատ յոյսեր էր դրւած. նա դեռ գործ չը տեսած վարձատրութիւն էր ստացած մինչև անգամ՝ ս. Աննեան շքանշան ստանալով։ Պատրիարքը մեծ ջանքեր է գործ դրել նրան ուղարկելու համար, բայց ամենից քիչ օգուտ բերողը նա եղաւ։ Մեր կարծիքով շատ չափազանցրած կարծիք են ունեցել այս կղերականի վերայ։ Նա թէև վերին աստիճանի ճկուն և յարմարւող բնաւորութիւն ունի, բայց համոզեցուցիչ և գրաւիչ ոչ մի յատկութիւն։ Կաթոլիկ եկեղեցու, իւր նախկին կրթարանից, նա ներշնչւել է հանգամանքներից ամեն կերպ օգտւելու ձգտումով, բայց համապատասխան ընդունակութիւններով օժտւած չը լինելով, մնում է միայն լոկ այդ փափագով, որը շատ հեշտ է թափան-

ցում, չընայելով նրա բազմատեսակ շարժումներին և բառերի անվերջ կուտակումներին։ Խօսելու ժամանակ նա աշխատում է բառերի անձրև տեղալ և այդպիսով շփոթեցնել հակառակորդին և ապա հերքել նորա կարծիքը, բայց այդ խաղով նա կարողանում է գրաւել միայն ծայրայեղ միամիտներին։ Դժուար թէ այս աստուածաբանը կարողանայ համոզել հայերին, որ նրանց համար ամենալաւ կաթողիկոսացուն Աշըգեանն է, թէպէտ չափազանց մեծ համոզմունք ունի իւր մտաւոր կարողութեան մասին, այն աստիճան, որ կարող է երկու միմեանց հերքող գաղափարներից իւրաքանչիւրի ճշմարտութիւնը, նայած իւր ցանկութեան, ապացուցանել։ 1887 և 1888 թուականներին ճեմարանում աստուածաբանութեան ուսուցիչ լինելով, սովոր է եղել իւր աշակերտներին, «ասանկ ալ կապացուցանեմ, անանկ ալ»։ Օրմանեանի գալով Աշըգեանի հարցը նորից բարձրացաւ. բայց նա այժմ գործ կունենայ կազմակերպուած մեծամասնութեան հետ։ Եթէ նրա թեկնածութիւնը որ և է կերպով հնարաւոր դառնայ, այդ կարող է լինել միայն հակառակորդի սխալի կամ միամտութեան պատճառով։ Կիւմուշկերտեանը, որ արդէն համաձայնել էր Աշըգեանին ցանկից հանելու առաջարկութեանը, Օրմանեանի գալուց յետոյ պնդում է, թէ «պատւոյ համար Աշըգեանին պէտք է գէթ չորրորդը անցնել»։ Դժուար թէ միւս աշխարհականներից այդպէս մտածողներ լինեն, բացի Երուսաղէմի պատգամաւորը, որը կարծես Խապայեանի ուրուականը լինի, երբեք չը կորցնելով նրանից։ Այս մարդու մասին ոչինչ չի կարելի ասել. հաստատ յայտնի չէ, արդեօք նա ընդունակ է այս ծանր հանգամանքների մէջ սեփական դատողութիւն ունենալ, որովհետև ոչ մի կողմից չէ յայտնւում։ Առաջին տպաւորութիւնով այս դեռ շատ երիտասարդ պատգամաւորը յիշեցնում է Ռուսաստանցի փոքր ինչ կրթուած գործակատարի։

Այսօր անսպասելի կերպով տեղս ժամանեց Ալաշկերտի հոգևորական պատգամաւորը առաջնորդի կողմից նշանակուած Եօնջալու գիւղի Տէր-Յովհաննէս քահանան իւր հետը բերելով Վաղարշապատի բնակիչ պ. Մ. Ենգիբարեանին Ալաշկերտի պատգամաւոր ընտրուած լինելու մասին վկայութիւն։ Տէր-Յովհաննէսը մի վերին աստիճանի համակրելի անձնաւորութիւն է։ Մարդ զարմանում է թէ ինչպէս Ալաշկերտի սպանիչ մթնոլորտի մէջ դեռ կարող են առաջ գալ այդպիսի բնաւորութիւններ։ Որքան զօրեղ է հայկական ազգի կենսական ոյժը. ինչպէս մի քանի բոյսեր, նա կարողանում է և ապառաժի մէջ արմատ ձգել և աճել։ Իւր բարձր հասակով, գրաւիչ դէմքով, պարզ և անմեղ հայեացքով Տէր-Յովհաննէսը իսկոյն աչքի է ընկնում։ Բայց այդ մեղմ և գրաւիչ տպաւորութիւն անող դէմքի մէջ, խորը գլխուլիս, երևում է և երկաթեայ կամքի արտայայտութիւն։ Վերին աստիճանի պարզ և անպաճոյճ է խօսում, բայց նրա խօսացածի թէ նիւթը և թէ պատմելու ձևը զգացնում են լսողին։ Սպանիչ պայմանների

մէջ մեծացած այս մարդը իւր լուսամտութեամբ և ձգտումների ազնուու-թեամբ որքան սաստիկ կոնտրաստ է ներկայացնում այստեղ ժողովածների ոչ սակաւների հետ, որոնք օժտուած են և ընդունակութիւններով և եւ-րոպական գիտութիւններով, բայց որոնք վաղուց չը գիտեն ինչ բան է ճշմարիտ խօսալը, ինչ բան է հասարակաց վիճակի համար ցաւը և տան-ջանքը, թէ և չարունակ այդ է նրանց փքուն խօսքերի նիւթը։

ԱԿԱՆԱՏԵՍ։